



ՀՀ, ք. Երևան, 0009, Տերյան փ. 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ  
Հեռ: +374 10 514 315, ֆաքս: +374 10 514 317, էլ. փոստ: [aspired@engl.com](mailto:aspired@engl.com)

**2019թ.-ի փետրվարի 8-ին ԳԱՏՕ ծրագրի գրասենյակում տեղի է ունեցել նախամրցութային հանդիպում՝  
հետաքրքրված հայտատուների հետ:**

**Պարզաբանումներ**

**ՀՆՀ # 010219-01 Ինժեներական նախագծի պատրաստում Հովտաշատ գյուղի ռոռզման համակարգի  
բարելավման ծրագրի շրջանակում**

Ամիս, ամսաթիվ՝ 8 փետրվարի, 2019թ. Վայր՝ ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակ (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 105/1, «Ցիտադել»  
բիզնես կենտրոն, 204 սենյակ)

N	Հարց	Պատասխան
1.	Ինչպես ձեռք բերել DUNS համար՝ հայտում ներկայացնելու համար:	Հայտատուի կողմից կտրամադրվի որևէ կոնտակտային տվյալ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակի կողմից էլեկտրոնային հասցե ուղարկելու համար, որտեղ անհրաժեշտ տվյալների գրանցմամբ հնարավոր կլինի ձեռք բերել DUNS համարը: Բոլոր ԱՄՆ և օտարերկրյա կազմակերպությունները, որոնք ստանում են 25,000 ԱՄՆ դոլար և ավելի բարձր արժողությամբ առաջնային պայմանագիր/գնման պատվեր կնքելու հնարավորություն, պարտավոր են պայմանագիրը կնքելուց առաջ ստանալ DUNS համար: Կազմակերպություններն ազատվում են այս պահանջից, եթե բոլոր աղբյուրներից նրանց ստացած համախառն եկամուտը նախորդ ֆիսկալ տարում ցածր է եղել 300,000 դոլարից: Նման հիմքով ազատվելու համար ME&A-ն յուրաքանչյուր հայտատուից պահանջում է ստորագրել ինքնահավաստագիր:
2.	ՀՆՀ-ում գրված է, որ աշխատանքներն սկսվելու են փետրվարի 11-ին, սակայն հայտերի ընդունման վեջնաժամկետը փետրվարի 15-ն է: Ժամկետներն անհասկանալի են:	Հրավերում առկա է սխալ՝ «փետրվարի 11-ի» փոխարեն պետք է լինի «մարտի 11»: Կարևոր է հիշել նաև, որ աշխատանքների կատարման համար սահմանված է՝ «մինչև 35 օրացուցային օր՝ պայմանագիրը կնքելուց հետո»:
3.	ՀՆՀ-ում նշվում է, որ հարկավոր է գրավոր համաձայնություններ ձեռք բերել ենթակառուցվածքների, հաղորդակցման գծերի և կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների հետ: Փորձը ցույց է տալիս, որ նամակագրությունը նշված ընկերությունների հետ ժամանակատար է: Արդյո՞ք ուշացումները խնդիրներ չեն առաջացնի:	Այստեղ շատ կարևոր է համայնքի ղեկավարի ակտիվ մասնակցությունը գործընթացին, և մենք կարծում ենք, որ այս պարագայում համայնքի ղեկավարը կաջակցի համաձայնությունների ձեռքբերման հարցերում:

4.	ՀՆՀ -ում մի քանի անգամ շեշտվում է «խողովակաշար» բառը: Արդյո՞ք խոսքը բաց ոռոգման համակարգի մասին է, թե՞ հնարավոր է նաև կաթիլային:	Ծրագրով չի նախատեսվում կաթիլային ոռոգման իրականացում:
5.	Արդյո՞ք կան սահմանափակումներ ջրօգտագործման տեսակետից: Կարո՞ղ ենք ենթադրել, որ միայն նշված հորն է օգտագործվելու:	Այո, համակարգը սնվելու է տվյալ արտեզյան հորից: Ծրագրի նպատակը այս հորի և գոյություն ունեցող ոռոգման համակարգի օպտիմալացումն է:
6.	Արդյո՞ք նախաձեռնվելու է ջրաչափական հանգույց:	Ոչ:
7.	Արդյո՞ք կա ջրօգտագործման թույլտվություն:	Ընթացքում է:
8.	Արդյո՞ք ունեք տեղեկատվություն խորքային հորի էլքերի մասին:	ԳUSO ծրագրի շրջանակներում իրականացվել է Արարատյան դաշտի խորքային արտեզյան հորերի
9.	Ոռոգման ենթակա հողատարածքի մասին տվյալներ կա՞ն, թե՞ ոչ:	Ոռոգման ենթակա տարածքը մոտ 50 հեկտար է: ՀՆՀ-ի հավելվածում ներկայացված է քարտեզ:
10.	Ինչպե՞ս է կազմակերպվելու պոմպի էլեկտրասնուցման հարցը:	Տարածքում չկա էլեկտրականություն, մոտակայքում որևէ ենթակայան չկա: Ըստ մեր նախնական ուսումնասիրության, առանձին գիծ անցկացնելը ձեռնտու չէ: Եթե առաջանա պոմպը միացնելու անհրաժեշտություն, նախատեսվում է օգտագործել համայնքի շարժական դիզել-գեներատորը: